Պարույր Սևակ

Մխիթարում եմ

Մխիթարեմ՝
Թե ինքնատիպ ու չընդունված բանաստեղծին
Երախտապարտ որդիներով ու թոռներով
Եվ հետմահու հատորներով,
Ապա տափակ ու միջակին,
Ե՛վս առավել պատեհապաշտ բութ գրչակին՝
Ա՛յն պարտադիր հաջողությամբ,
Որ և՛ ունի, և՛ կունենա՝
Ողջ է քանի
Ու կենդանի:
Եվ ծերացած այն ամուրուն,
Որին ոչ ոք օր ծերության
Չի փայփայում ու գուրգուրում,
Խաբեմ ես այն սփոփանքով,
Որ... չի կապվել նա երբևէ
Լաչառ կնոջ պինդ կապանքով...
Ում մերժել է իր դրացի
Հոգի հանող
Ու խելք տանող
աղջիկը չար,
Ես այն մտքով չեմ սփոփում,

Թե չի վարվել այդ դրացին
արդարացի:
Ես մերժվածին սփոփում եմ լոկ այն դողով,
Որ... չի ապրել նա առավել ահավորը,
Գիտե՞ք որը.
Դավաճանելն ու խաբելը իր սիրածի...
Անբա՛խտ իմ քույր,
Ո՛վ չբեր կին,
Անբուժելի քո այդ վերքին
Ես ո՞րտեղից, ի՞նչ դեղ ճարեմ,
Ես քեզ ինչո՞վ մխիթարեմ:
Մխիթարեմ ա՛յն սարսափով,
Որ չես ապրել որդեկորույս մոր կսկիծը,
Երբ պոկում են կարծես սիրտը դեղձ կրծքիցը...
Նաև մի քիչ լինեմ բարի
Եվ սարն ի վար ցած գլորվող-ջարդվող քարին
Մխիթարեմ այն թռիչքով և անկումով,
Որ վայել է և... հանճարին:
Ընդհատակում, հոգու խորքում
Զգույշ տարվող թույլ պայքարին
Մխիթարեմ նոր ուժերի հավաքումով:
Հարբուխ ընկած-մրսած չարին
Մխիթարեմ և... թոքերի բորբոքումով:
Արձագանքով մխիթարեմ համբր սարին:
Գոլորշացող-ցնդող ջրին,
մարող հրին
Մխիթարեմ այն օրենքով, որ բարությամբ
Սահմանել է ինչ-որ ծերուկ Լաուազե.
Հարատևել ա՛յլ դրությամբ,
Ո՛չ մի չափով չնվազել...

Ուղղագրական նոր օրենքով
Գործածումից հանված տառին
Մխիթարեմ այն տանջանքով,
Որ տարիներ, ձի՛գ տարիներ
Պատճառել է ծեր ու մանկան:
Մխիթարեմ հատվող լարին
Ա՛յն ճնգոցով, որ կարող է նա՛ արձակել,
Ուրիշ և ո՛չ, և՛ ո՛չ մի լար՝
թե նվագեն
Վարպետ-ճարտար մատներն անգամ...
Իզուր անցած գոռ պայքարին
Մխիթարեմ իրեն ծնող
Ու կործանող
պատճառներով:
Հերքված աստծուն խեղճ ու բարի՝
Հազար ու մի շեն ու ավեր տաճարներով:
Եվ, վերջապես,
Ծով արյունով թրջված դարին
Մխիթարեմ
Այն հավատի ավետիքով (թե՞ չար բոթով),
Որ արյունն այդ կցամաքի
Թղթերի մեջ, թանաքի հետ...
Իսկ ի՞նձ...
Ինչով ի՞նձ սփոփեմ,
Մխիթարե՛մ, ո՛չ թե խաբեմ:
Այն կն՞ոջ պես ինձ սփոփեմ,
Որին
միշտ էլ երբ օրհնում են ավանդաբար,
Նույն հին բարի խոսքն են ասում.
«Աստվա՛ծ պահի գլխավորիդ»:

Իսկ խեղճ կինը, թե չամաչեր.
Երինջի պես կբառաչեր.
«Թաղե՛մ էդպես գլխավորին»,
Որովհետև գլխավորը՝
Այդ անհոգի բեղավորը,
Նրան ծեծում ու տանջում է ամեն վայրկյան՝
Չհարցնելով անմե՞ղ է, թե՞ մեղավոր է.
Այն էլ այնպե՛ս,
որ անհոգի
Ճիպոտը միշտ կամրջվում է
Իր մի ծայրով կնոջ այտին, մեկով՝ հոնքին,-
Եվ խեղճ կինը ցավից լալիս,
Բայց և աստծուն փառք է տալիս,
Որ... գեթ ա՛չքը չկուրացավ ծեծ ուտելիս...
Մխիթարվեմ այն հավաստի իրողությամբ,
Որ ես ինքըս տղամարդ եմ և ոչ թե կին,
Եվ իմ ապրած ժամանակը՝
Արտասվո՛ր
Եվ
Լուսավո՛ր՝
Ո՛չ մի բանով չի նմանվում
Այդ նզովյալ ժամանակին...

19, 21-22.VI.1957թ.
Մոսկվա